ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.09.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/69

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

«Մատենագիր» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝

Մ. Լալայանի (լիազորագիր տրված՝ 11.08.2020թ.)

Ա/Ձ Կարինե Բախշինյան Վոլոդյայի ներկայացուցիչ՝

Հ. Օհանյանի (լիազորագիր տրված՝ 12.08.2020թ.),

քննելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կողմից արխիվացման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/28» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Մատենագիր» ՍՊԸ-ի կողմից 06.08.2020թ. ներկայացված (07.08.2020թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/69 բողոք), պարզեցի հետևյալը.

1. <u>«Մատենագիր» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Մատենագիր» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 06.08.2020թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Գնումների մասին» ՀՀ օրենքի.

50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն. «Յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Սույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից»:

51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը»:

<u>Գործի հակիրճ նկարագրություն</u>.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար արխիվացման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված 18.07.2020 թվականի «ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/28» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցած հինգ ընկերություններից չորսի փաստաթղթերում առկա են եղել անհամապատասխանություններ, մասնավորապես.

- Արսեն Գրիգորյան ԱՁ-ի կողմից ներկայացված հայտի Հավելված 1-ն էլեկտրոնային թվային ստորագրությամբ ստորագրված չէ, իսկ հայտի ապահովման մեջ շահառուի տվյալները բացակայում են,
- Կարինե Բախշինյան ԱՁ-ի ներկայացված հայտի Հավելված 1-ում հեռախոսահամարը լրացված չէ, իսկ հայտի ապահովման մեջ շահառուի տվյալները բացակայում են,

- «ՎՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի ներկայացված հայտի Հավելված 3-ում 5-րդ կետով նշված ժամկետը չի համապատասխանում հրավերի պահանջներին,
- «ՆԱՆԴՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի ներկայացված փաստաթղթերում հայտի ապահովումը բացակայում է,
- սահմանված կարգով նրանց առաջարկվել է ներկայացնել ճշտված փաստաթղթեր (նախապես ներկայացված և ճշտված փաստաթղթերը կցվում են:)

Մեր դիրքորոշումը.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար արխիվացման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված 18.07.2020 թվականի «ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/28» ծածկագրով գնանշման հարցման հրավերի շրջանակներում ներկայացված ճշգրտված փաստաթղթերը չեն համապատասխանում սահմանված պահանջներին:

Հիմնավորում.

«ՎՏԲ Հայաստան Բանկ» Ստեփանավան մասնաճյուղի կառավարիչ Ա.Գալստյանի կողմից ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/28 ծածկագրով հայտարարված գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին ներկայացված «Գրությունը» չունի իրավաբանական ուժ քանի որ՝

Պաշտոնական նամակները ձևակերպվում են նամակի ձևաթղթի վրա որի պարտադիր վավերապայմաններն են կազմակերպության անվանումը /ինչպես նշված է կանոնադրության մեջ/, խորհրդանիշը, իրավաբանական հասցեն, հեռախոսահամարը և այլ տեղեկատվական տվյալներ.

Ներկայացված փաստաթուղթը չունի գրանցման համար.

Բացակայում է հասցեատերը՝ պարզ չէ ում է ուղղված.

Ներկայացված «Գրությունը» չի համապատասխանում հայտով պահանջվող 7.1, 8.10 կետերի պահանջներին:

Ինչպես նաև մի շարք տեխնիկական անճշտություններ այպես՝ գործավարությունում «Գրության» փոխարեն օգտագործում են «Նամակ» եզրույթը, իսկ նամակի ձևաթղթում որպես փաստաթղթի տեսակ չեն գրում «Նամակ», թվականի կրճատման դեպքում թ-ից հետո դրվում է կետի նշանը, իրականում թիվ 18 ոչ թե հանձնարարական է այլ վճարման հանձնարարագիր սխալ է «ՀՀ Պետ Եկամուտների Կոմիտե» հապավումը, և վերջապես հայերենում ընդունված է նախադասությունը ավարտել վերջակետով:

Իրավական հիմքերը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

«Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են»:

Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն.

«Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝

1) բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, կամ

2) այն մասնակցին ընտրելու մեթոդով, որի առաջարկած գնին և ոչ գնային չափանիշներին տրված գործակիցների հանրագումարը ամենաբարձրն է: Այս մեթոդի կիրառման դեպքում հայտերը գնահատելիս հրավերով սահմանած դեպքերում և կարգով, առաջարկվող գնից բացի, հաշվի են առնվում ոչ գնային այլ չափանիշներ: Ոչ գնային չափանիշները պետք է փոխկապակցված լինեն պայմանագրի առարկայի հետ և դրանց հարաբերական կշիռները ներկայացվեն հրավերի մեջ: »

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն.

«Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները).

2) հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն.

«Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է քննել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար արխիվացման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված 18.07.2020 թվականի «ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/28» ծածկագրով գնանշման հարցման հրավերի շրջանակներում Կարինե Բախշինյան ԱՁ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի հրավերի պահանջներին համապատասխանությունը և Կարինե Բախշինյան ԱՁ-ին ընտրված մասնակից արձանագրելու և պայմանագիր կնքելու փաստի իսկությունը:

Ընկերությունն ի լրումն բողոքի հայտնել է հետևյալը.

««Կարինե Բախշինյան» ԱՁ-ի ներկայացուցիչ Հարություն Օհանյանի կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանին ներկայացված «Գրավոր դիրքորոշում» փաստաթղթում (թվականը փաստաթղթում նշված չէ այդ պատճառով հղում չի արվում թվագրմանը) պնդում է, որ իր կողմից ներկայացված հայտը համապատասխանում է ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/28 ծածկագրով Գնանշման հարցման հրավերի (այսուհետև՝ Հրավեր) պահանջներին և հայտով պահանջվող 3 փաստաթղթերից երկուսում առկա անճշտությունները չունեն որևէ իրավական հիմք: Հիշեցնենք, որ գնանշման հարցման գնահատող հանձնաժողովը (այսուհետև՝ Պատվիրատու) 2020 թվականի հուլիսի 27 նիստում Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերում արձանագրել էր հետևյալ անհամապատասխանությունները՝ Հրավերի հավելված 1-ում լրացված չէր Մասնակցի հեռախոսահամարը և հայտի ապահովումը հավաստող վճարման հանձնարարագրում բացակայում էին շահառուի տվյալները:

Եվ եթե փաստաթղթերը կազմված էին Հրավերի պահանջներին համապատասխան, ինչու՞ էր Մասնակիցը Պատվիրատուին ներկայացրել Հրավերով պահանջվող Հավելված 1 փաստաթղթի շտկված տարբերակը, արդեն նշելով ճիշտ հեռախոսահամարը և վճարման հանձնարարագրի «ենթադրյալ» ճշգրտված տարբերակը:

Գրավոր դիրքորոշման 1.2. կետում Մասնակիցը պնդում է, որ Պատվիրատուն չնշելով որևէ իրավական հիմք իրավունք չուներ իր կողմից ներկայացրած փաստաթղթերը համարել Հրավերի պահանջներին անհամապատասխան:

Գտնում ենք, որ նման պնդումն իրավազուրկ է, քանի որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի № 526-Ն որոշման 32-րդ կետում նշված է, որ Մասնակիցը հայտով ներկայացնում է գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով էլեկտրոնային փոստի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը (ընդգծված է մեր կողմից):

Երկրորդ փաստաթղթի ճշգրտման վերաբերյալ հայտնում ենք՝ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 17-րդ կետի համաձայն «Վճարման հանձնարարականում» շահառուի տվյալների նշումը պարտադիր պահանջ է, որը Մասնակիցը համարել է՝ ավելորդություն (այդպես գրված է գրավոր դիրքորոշման մեջ): Մասնակցի համար իրավունքի նորմն ավելորդություն է:

Քանի որ 2020 թվականի հուլիսի 24-ի թիվ 18 վճարման հանձնարարագրում նշված չէին շահառուի տվյալները Մասնակիցը, որպես ճշգրտում Պատվիրատուին է ներկայացրել «ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի Ստեփանավանի մասնաճյուղի կառավարչի կողմից տրամադրված գրություն որտեղ նշված է, որ տվյալ փոխանցված գումարի շահառու պետք է համարել «ՀՀ Պետ Եկամուտների Կոմիտեն»:

Այդ գրության կապակցությամբ հայտնում ենք հետևյալը՝ փաստաթուղթը ձեռք է բերում իրավաբանական ուժ երբ նա ապահովում է հետևյալ երեք պայմանները՝ առաջին չի հակասում գործող օրենսդրությանը, երկրորդ՝ ընդունված է տվյալ մարմնի կամ անձի իրավասության սահմաններում, երրորդ՝ համապատասխանում է գործավարությամբ փաստաթղթերի կազմմանը և ձևավակերպմանը ներկայացվող պահանջներին:

Վերոգրյալ պայմանները չպահպանելու դեպքում ոչ մի դատարան նման փաստաթուղթը չի ընդունի որպես ապացույց:

Առաջին պայմանի վերաբերյալ հայտնում ենք, որ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 32-ի առաջին կետի համաձայն կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազորված մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում: Նույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ ենթակետի համաձայն լիազորված մարմին է համարվում՝ պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող՝ Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության

պետական մարմինը: «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող է համարվում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը, որն էլ բնականաբար հանդիսանում է հայտի ապահովման հաշվի շահառու:

Երկրորդ պայմանը՝ որը վերաբերվում է «ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի Ստեփանավանի մասնաճյուղի կառավարչի իրավասությանը անմիջականորեն բխում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության հոդված 6-ի, 1-ին կետի պահանջից այն է՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Համաձայն «ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի կանոնադրության 1.3 կետի, բանկն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Բանկերի և բանկային գործունեության մասին», «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով: Հետևաբար եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ է սահմանված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության շահառու լինելու հանգամանքը ապա բանկի մասնաճյուղի ղեկավարը իրավունք չուներ իր գրությամբ այլ մարմին ճանաչել որպես շահառու:

Իսկ ինչ վերաբերվում է փաստաթղթերի ճիշտ կազմելուն և ձևավակերպմանը ներկայացվող պահանջներին, ցանկացած մարմին կամ անձ, որևէ պաշտոնական փաստաթուղթ կազմելիս պետք է ղեկավարվի փաստաթղթերի կազմմանը և ձևավորմանը ներկայացվող գործավարության պահանջներով:

Այդ պահանջները սահմանված են ՀՍՏ 6.3-98, ՀՍՏ 105-2007 Հայաստանի Հանրապետության ստանդարտներով:

Ամփոփելով վերոգրյալը պարզվում է հետևյալը՝ Մասնակիցը չի կարողացել հիմնավորել, որ նորմատիվ իրավական ակտով է սահմանված վճարման հանձնարարականում նամակով ճշգրտում կատարելը: Եվ երկրորդ, որ նորմատիվ իրավական ակտով է Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն «900008000466» գանձապետական հաշվի շահառու հանդիսանում:

Այսպիսով, որպես պահանջի հիմնավորում գտնում ենք, որ Մասնակիցը չի ապահովել Հրավերի 8.10 կետի պահանջը այն է՝ սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերին համապատասխան չի շտկել Պատվիրատուի կողմից արձանագրված անհամապատասխանությունը, հետևաբար նրա կողմից ներկայացված հայտը պետք է մերժվի և նա պետք է զրկվի պայմանագիր կնքելու իրավունքից: Համաձայն Հրավերի 8.20 կետի պահանջի ընտրված մասնակից պետք է ճանաչվի հաջորդ տեղը զբաղեցրած մասնակիցը»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 14.08.2020թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքը:

2. <u>Ա/Ձ Կարինե Բախշինյան Վոլոդյայի ներկայացրած փաստերը և հիմնավորումները.</u>

Կարինե Բախշինյան Վոլոդյայի Ա/Ձ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված միջնորդությամբ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 14.08.2020թ. որոշմամբ ԳԲՔԱ-ՆԳ-2020/69 բողոքով ներգրավվել է որպես երրորդ կողմ:

Կարինե Բախշինյան Վոլոդյայի Ա/Ձ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«*<u>Գործի նախապատմությունը</u>*.

1.1. 18.07.2020թ.-ին ՀՀ պետական եկամուտների կոմիտեն (այսուհետև նաև՝ Պատվիրատու) www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով հայտարարել է թիվ «ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/28» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետև նաև՝ Մրցույթ): Մրցույթի գնման առարկան է հանդիսացել «Արխիվացման ծառայություններ»: Ի թիվս այլ մասնակիցների գնման ընթացակարգին մասնակցել են «Կարինե Բախշինյան» Ա/Ձ-ն (այսուհետև նաև՝ Մասնակից) և «ՄԱՏԵՆԱԳԻՐ» ՍՊԸ-ն (այսուհետև նաև՝ Ընկերություն): Գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով «Կարինե Բախշինյան» Ա/Ձ-ն ներկայացրել է գնման ընթացակարգի հրավերին համապատասխանող հայտ և նվազագույն գնային առաջարկ, հայտում ներառված էր նաև հայտի ապահովում կանխիկ փողի ձևով: Մրցույթի հրավերի 7.1 կետի համաձայն, հայտի ապահովման գումարը Մասնակիցը վճարել է Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ

բացված «900008000466» հաշվեհամարին, վճարումը կատարվել է «ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի (այսուհետև նաև՝ Բանկ) միջոցով: Վճարման վերաբերյալ տրվել է 24.07.2020թ.-ի թիվ 18 վճարման հանձնարարագիրը, այդ հանձնարարագրում վճարման նպատակը նշված է «փոխանցվում է ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/28 ծածկագրով հրավերի հայտի ապահովման գումար»:

1.2. Սակայն, առանց նշելու որևէ իրավական հիմք և հաշվի չառնելով, որ Մասնակցի հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին Պատվիրատուն Մրցույթի 27.07.2020թ.-ի թիվ 2 արձանագրությաբ արձանագրել է, որ Մասնակցի ներկայացրած հայտի ապահովումը չի համապատասխանում հրավերի պահանջներին, այն է՝ «(…), հայտի ապահովման մեջ շահառուի տվյալները բացակայում են»: Արձագանքելով Պատվիրատուի այդ դիքորոշմանը, Մասնակիցը ներկայացրել է Բանկի կողմից 28.07.2020թ.-ին տրված և հաստատված «Գրություն» վերտառությամբ գրավոր փաստաթղութ (այսուհետև նաև՝ Գրություն) որտեղ նշված է, որ 24.07.2020թ.-ի թիվ 18 հանձնարարականով փոխանցված գումարի շահառուն է ՀՀ պետական եկամուտների կոմիտեն: Հաշվի առնելով դա, Մրցույթի 03.08.2020թ.-ի թիվ 3 արձանագրությամբ Մասնակցի հայտը գնահատվել է բավարար և վերջինս ճանաչվել է ընտրված մասնակից:

1.3. Ուսումնասիրելով Ընկերության կողմից բերված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/69 ծածկագրով բողոքը (այսուհետև նաև՝ Բողոք) կարող ենք գալ այն եզրահանգման, որ Ընկերությունը փորձում է վիճարկել 28.07.2020թ.-ին Բանկի կողմից տրված գրավոր փաստաթուղթը և այդ փաստաթղթի հիմքով Մասնակցի հայտը բավարար գնահատելու վերաբերյալ գնահատող հանձնաժողովի որոշումը:

Ուսումնասիրելով Բողոքը՝ հայտնում ենք, որ ամբողջությամբ առարկում ենք դրա դեմ և կարծում ենք, որ այն ամբողջությամբ ենթակա է մերժման:

2.*<u>Դիրքորոշման համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>*

2.1. Մրցույթին Մասնակցելու նպատակով Մասնակիցը ներկայացրել է Մրցույթի հրավերի պահանջներին համապատասխանող հայտ և հայտի ապահովում:

2.2. Հայտի ապահովումը ներկայացվել է կանխիկ փողի ձևով: Հայտի ապահովման գումարը Մասնակիցը վճարել է Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000466» հաշվեհամարին, վճարումը կատարվել է Բանկի միջոցով: Վճարման վերաբերյալ տրվել է 24.07.2020թ.-ի թիվ 18 վճարման հանձնարարագիրը, այդ հանձնարարագրում վճարման նպատակը նշված է

«փոխանցվում է ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/28 ծածկագրով հրավերի հայտի ապահովման գումար»:

2.3. Հայտի ապահովումը կանխիկ փողի ձևով ներկայացնելու պայմանները սահմանված են Մրցույթի հրավերի 1-ին մասի 7.1. և 2-րդ մասի 2.4. կետերով:

2.4. Բանկի կողմից 28.07.2020թ.-ին տրվել է «Գրություն» վերտառությամբ գրավոր փաստաթուղթ որտեղ նշված է, որ 24.07.2020թ.-ի թիվ 18 հանձնարարականով փոխանցված գումարի շահառուն է ՀՀ պետական եկամուտների կոմիտեն:

2.5. Զուրկ է իրավական հիմնավորումից Բողոքում նշված պնդումը, որ Գրությունը չունի իրավաբանական ուժ:

3. *<u>Բողոքի հիմքերը, փաստարկները.</u>*

3.1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

«1.Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:»:

Մրցույթի հրավերի 1-ին մասի 7.1. կետի համաձայն.

«7.1 Մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում:

Հայտի ապահովումը ներկայացվում է (...) կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին: (...):

Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000466» գանձապետական հաշվին, (...):»

Մրցույթի հրավերի 2-րդ մասի 2.4. կետի համաձայն.

Ընթացակարգին մասնակցելու համար մասնակիցը համակարգի միջոցով ներկայացնում է հայտ: Հայտին կցվում են սույն հրավերով նախատեսված համապատասխան փաստաթղթերը (տեղեկությունները):

Մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝

1) «Պիտանելիության չափորոշիչ».

2.4 հայտի ապահովում, որը ներկայացվում է կանխիկ փողի (...): Ընդ որում հայտով ներկայացվում է կանխիկ փողի վճարումը հավաստող բնօրինակ փաստաթղթից (...):»

Վերը նշված նորմերից հետևում է, որ գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացված հայտերը գնահատվում են գնման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և մերժման են ենթակա միայն այն հայտերը, որոնք չեն համապատասխանում գնման ընթացակարգի հրավերի պայմաններին: Ընդ որում Մրցույթի հրավերի 1-ին մասի 7.1. և 2-րդ մասին 2.4. կետերից ակնհայտ է, որ կանխիկ փողի ձևով հայտի ապահովում ներկայացնելու համար միայն անհրաժեշտ է հայտի ապահովման գումարը փոխանցել հրավերում նշված գանձապետական հաշվին և փոխանցման փաստը հաստատող փաստաթուղթը գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտով տրամադրել պատվիրատուին: ՈՒստի այդ պայմանները կատարելու դեպքում մասնակցի ներկայացրած հայտի ապահովում չներկայացնելու կամ հայտի ապահովումը հրավերի պայմաններին անհամապատասխան ներկայացնելու հիմքով ենթակա չէ մերժման, հետևաբար հայտում այլ անհամապատասխանությունների բացակայության դեպքում այն պետք է գնահատվի հրավերի պահանջներին բավարար, այսինքն՝ որպես հրավերի պահանջներին բավարարող հայտ:

Գործի փաստերից երևում է, որ հայտի ապահովման գումարը Բանկի միջոցով Մասնակիցը փոխանցել է հայտի ապահովման համար Մրցույթի հրավերում նշված գանձապետական հաշվին և փոխանցման վերաբերյալ տրված 24.07.2020թ.-ի թիվ 18 վճարման հանձնարարագիրը հայտով ներկայացրել է Պատվիրատուին, ավելին՝ փոխանցման նպատակը որոշակիացնելու համար վճարման հանձնարարագրում Մասնակցի պահանջով նշվել է, որ այդ գումարը փոխանցվում է որպես ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/28 ծածկագրով հրավերի հայտի ապահովման գումար: Այսինքն՝ նշյալից կարող ենք եզրահանգել, որ Մասնակիցը կատարել է Մրցույթի հրավերով սահմանված հայտի ապահովումը կազմելու և ներկայացնելու պայմանները, հետևաբար Մասնակցի հայտը ի սկզբանե բավարարում էր հրավերի պահանջներին և պետք է գնահատվեր բավարար, քանի որ Մասնակցի հայտով ներկայացված մյուս փաստաթղթերում թերություններ Պատվիրատուն չէր արձանագրել:

Վերոգրյալից կարող ենք նաև եզրահանգել, որ Մրցույթի 27.07.2020թ.-ի թիվ 2 արձանագրությամբ արձանագրված Մասնակցի հայտում տեղ գտած անհամապատասխանության վերաբերյալ Պատվիարտուի դիտողությունը ավելորդ էր: Մասնավորապես՝ այդ արձանագրությամբ արձանագրվել էր, որ Մասնակցի

ներկայացրած հայտի ապահովումը չի համապատասխանում հրավերի պահանջներին, այն է՝ «(…), հայտի ապահովման մեջ շահառուի տվյալները բացակայում են»:

Սակայն, հաշվի չառնելով այդ պահանջի ավելորդությունը Մասնակիցը դիմել է Բանկին խնդրելով 24.07.2020թ.-ի թիվ 18 վճարման հանձնարարագրում կատարել փոփոխություն և որպես շահառու նշել Պատվիրատուին: Սակայն դիմելու պահին վճարման հանձնարարագրում փոփոխությունը հնարավոր չէր կատարել, քանի որ վճարումը արդեն կատարված էր: Այդ իսկ պատճառով Բանկը 28.07.2020թ.-ին տրամադրել է Մասնակցին «Գրություն» վերտառությամբ գրավոր փաստաթղթ որտեղ նշել է, որ 24.07.2020թ.-ի թիվ 18 հանձնարարականով փոխանցված գումարի շահառուն է ՀՀ պետական եկամուտների կոմիտեն: Մասնակիցն էլ իր հերթին որպես հայտի ապահովման շտկում Գրությունը տրամադրել է Պատվիրատուին: Պատվիրատուն ստանալով Գրությունը Մասնակցի հայտը գնահատել է բավարար և Մասնակցին ճանաչել է Մրցույթի հաղթող, քանի որ վերջինիս գնային առաջարկը նվազագույններ:

3.2. Զուրկ է իրավական հիմնավորումից Բողոքում նշված Ընկերության այն պնդումը, որ Գրությունը չունի իրավաբանական ուժ: Մասնավորապես նշյալը պնդելով Ընկերությունը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ: Եվ տվյալ դեպքում Ընկերությունը, Մսանակիցը, Պատվիրատուն ու Բանկը հանդիսանում են քաղաքացիաիրավական հարաբերությանների սուբյեկտ: Իսկ Մասնակցի պահանջով Բանկի կողմից տրված Գրությունը ևս մեկ անգամ իրավունք է տալիս Պատվիրատուին ստանալ հայտի ապահավման գումարը՝ Օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հանգամանքների ի հայտ գալու դեպքում:

Վերոգրյալից կարող ենք եզրահանգել, որ 28.07.2020թ.-ին Բանկի տրամադրած «Գրություն» վերտառությամբ գրավոր փաստաթուղթը ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածի ուժով կարելի է դիտարկել որպես միակողմ գործարք, քանի որ այն Պատվիրատուի համար սահմանում է հայտի ապահովման գումարը ստանալու իրավունք: Իսկ Ընկերությունը Բողոքում իր վերը նշված պնդմամբ բարձրացնում է Գրության անվավերության՝ առոչինչ լինելու հարցը:

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 303 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «գործարքն անվավեր է սույն օրենսգրքով սահմանված հիմքերով դատարանի կողմից այն այդպիսին ճանաչելու ուժով (վիճահարույց գործարք) կամ անկախ նման ճանաչումից (առոչինչ գործարք)։»: Այսինքն, որպեսզի Գրությունը համարվի անվավեր այն պետք է այդպիսին ճանաչվի դատարանի կողմից կամ այն այդպիսին պետք է լինի օրենքի ուժով, մասնավորապես՝ օրենքով պետք է լինի հստակ սահմանված, որ նման հատկանիշներով օժտված գործարքը առոչինչ է, տվյալ դեպքում Ընկրությունը Բողոքում չի վկայակոչել ոչ առաջինը, ոչ էլ երկրորդը: Նշյալից հետևում է, որ Գրության իրավաբանական ուժ չունենալու վերաբերյալ Ընկերության պնդումը անհիմն է:

3.3. Ամփոփելով վերոգրյալը կարող ենք եզրահանգել, որ Մրցույթի շրջանակներում Մասնակցի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին, հետևաբար Ընկերության ներկայացրած բողոքը մեր կարծիքով ենթակա է մերժման»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կարինե Բախշինյան Վոլոդյայի Ա/Ձ-ն խնդրել է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ամբողջությամբ մերժել «Մատենագիր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/69 ծածկագրով բողոքը:

Կարինե Բախշինյանի Վոլոդյայի Ա/Ձ-ի ներկայացուցիչն ապահովել է իր մասնակցությունը բողոքի քննության նպատակով 14.08.2020թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստին և հայտնել է վերոնշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ներկայացրած փաստերը և հիմնավորումները.</u>

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն սույն բողոքի շրջանակներում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է տրամադրել «ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/28» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով անհրաժեշտ փաստաթղթերը, սակայն սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում բողոքի վերաբերյալ չի ներկայացրել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 14.08.2020թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ԳԲՔԱ-ՆԳ-2020/69 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2020/69 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից արխիվացման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/28» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.07.2020թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ա/Ձ Կարինե Բախշինյանի կողմից ներկայացված հայտի Հավելված 1-ում հեռախոսահամարը լրացված չէ, իսկ հայտի ապահովման մեջ շահառուի տվյալները բացակայում են:

3. Նույն արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ որոշվել է նիստը կասեցնել և ծանուցել Ա/Ձ Կարինե Բախշինյանին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել ներկայացված փաստաթղթերը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.08.2020թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ա/Ձ Կարինե Բախշինյանի կողմից ներկայացված շտկված փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/28» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

5. Նույն արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ Ա/Ձ Կարինե Բախշինյանը ճանաչվել է ընտրված մասնակից:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Մատենագիր» ՍՊԸ-ի 06.08.2020թ. ներկայացված բողոքը, Ա/Ձ Կարինե Բախշինյանի դիրքորոշումը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը սահմանում է, որ հայտի ապահովումը՝ սույն օրենքով նախատեսված դեպքերում մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի ե) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Նույն կետի 9-րդ ենթակետով սահմանվում է, որ եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա ինչպես հայտի, այնպես էլ պայմանագրի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Ընդ որում՝ հայտի ապահովման չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից արխիվացման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/28» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.07.2020թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ա/Ձ Կարինե Բախշինյանի կողմից ներկայացված հայտի Հավելված 1-ում հեռախոսահամարը լրացված չէ, իսկ հայտի ապահովման մեջ շահառուի տվյալները բացակայում են:

Նույն արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ որոշվել է նիստը կասեցնել և ծանուցել Ա/Ձ Կարինե Բախշինյանին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել ներկայացված փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.08.2020թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ա/Ձ Կարինե Բախշինյանի կողմից ներկայացված շտկված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/28 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

Նույն արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ Ա/Ձ Կարինե Բախշինյանը ճանաչվել է ընտրված մասնակից:

Այսպիսով՝ ուսումնասիրելով «ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/28» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը, Ա/Ձ Կարինե Բախշինյանի կողմից հայտով ներկայացված 24.07.2020թ. թիվ 18 վճարման հանձնարարագիրը, արձանագրում եմ հետևյալը.

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը սահմանում է, որ ***<u>հայտի ապահովումը՝ սույն օրենքով նախատեսված դեպքերում մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է:</u>***

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***<u>մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում,</u>*** որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.1 ենթակետի համաձայն՝ ***<u>Մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում:</u>***

<u>Հայտի ապահովումը ներկայացվում է</u> բանկային երաշխիքի (հավելված 3) կամ ***<u>կանխիկ փողի ձևով</u>***, որի չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին: Ընդ որում, եթե մասնակիցը հայտի ապահովումը ներկայացրել է սույն կետով

սահմանված չափից ավելի, ապա հայտը համարվում է հրավերի պահանջներին բավարարող և ենթակա չէ մերժման:

<u>Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000466» գանձապետական հաշվին</u>, որը ենթակա է վերադարձման այն ներկայացրած մասնակցին՝ սույն ընթացակարգի շրջանակում պայմանագիրը կնքվելուց կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո քսան աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ սույն հրավերի 1-ին մասի 7.3 կետով նախատեսված դեպքերի:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.2 ենթակետով սահմանվում է, որ ***<u>հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:</u>***

Այսպիսով վերը նշված կարգավորումների հստակ ցույց են տալիս, որ գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացված հայտերը գնահատվում են ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և մերժման են ենթակա միայն հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը:

Այս տեսանկյունից արձանագրում եմ, որ Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի և Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.1 ենթակետով սահմանված պարտադիր պահանջներ են հանդիսանում, որ կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովման գումարը փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000466» գանձապետական հաշվին և փոխանցման փաստը հավաստող փաստաթուղթը հայտով ներկայացնի պատվիրատուին:

Այսպիսով՝ ուսումնասիրելով Ա/Ձ Կարինե Բախշինյանի կողմից Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.1 ենթակետի համաձայն հայտով որպես հայտի ապահովում ներկայացված կանխիկ փողի վճարումը հավաստող բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակը, արձանագրում եմ, որ վերջինս հայտի ապահովման գումարը՝ կանխիկ փողի ձևով, 24.07.2020թ. թիվ 18 վճարման հանձնարարագրի համաձայն «ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի միջոցով փոխանցել է Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000466» հաշվեհամարին, հետևաբար նման պայմաններում, հաշվի առնելով

այն փաստական հանգամանքը, որ հայտերը Ընթացակարգի հրավերի 1-ին 8-րդ կետի 8.2 ենթակետի համաձայն գնահատվում են հրավերով սահմանված կարգով, գտնում եմ, որ Ա/Ձ Կարինե Բախշինյանի կողմից հայտով ներկայացված հայտի ապահովումը՝ կանխիկ փողի ձևով, համապատասխանում է Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

Վերոգրյալով պայմանավորված, գտնում եմ, որ Ընկերության բողոքը հիմնավոր չէ և ենթակա է մերժման:

Ինչ վերաբերում է բողոքաբերի կողմից բողոքով ներկայացված հետևյալ դիտարկմանը, այն է՝ շտկման արդյունքում Ա/Ձ Կարինե Բախշինյանի կողմից ներկայացվել է «ՎՏԲ Հայաստան Բանկ» Ստեփանավան մասնաճյուղի կառավարիչ Ա.Գալստյանի «Գրությունը», որը չունի իրավաբանական ուժ քանի որ՝

Պաշտոնական նամակները ձևակերպվում են նամակի ձևաթղթի վրա որի պարտադիր վավերապայմաններն են կազմակերպության անվանումը /ինչպես նշված է կանոնադրության մեջ/, խորհրդանիշը, իրավաբանական հասցեն, հեռախոսահամարը և այլ տեղեկատվական տվյալներ.

Ներկայացված փաստաթուղթը չունի գրանցման համար.

Բացակայում է հասցեատերը՝ պարզ չէ ում է ուղղված.

Ներկայացված «Գրությունը» չի համապատասխանում հայտով պահանջվող 7.1, 8.10 կետերի պահանջներին:

Ինչպես նաև մի շարք տեխնիկական անճշտություններ այպես՝ գործավարությունում «Գրության» փոխարեն օգտագործում են «Նամակ» եզրույթը, իսկ նամակի ձևաթղթում որպես փաստաթղթի տեսակ չեն գրում «Նամակ», թվականի կրճատման դեպքում թ-ից հետո դրվում է կետի նշանը, իրականում թիվ 18 ոչ թե հանձնարարական է այլ վճարման հանձնարարագիր սխալ է «ՀՀ Պետ Եկամուտների Կոմիտե» հապավումը, և վերջապես հայերենում ընդունված է նախադասությունը ավարտել վերջակետով, ապա սույն մասով գտնում եմ, որ վերոնշված տեխնիկական վրիպակները չեն կարող հայտի մերժման հիմք հանդիսանալ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Մատենագիր» ՍՊԸ-ի կողմից 06.08.2020թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**